ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2022/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **10.05.2022թ.**

2022 թվականի մայիսի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 1-ին հարկ հասցեում գտնվող «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2022/01 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը հետևյալ կազմով.

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	
Նարեկ Մկրտչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ադմինիստրատիվ ծառայության ղեկավար
գնահատող անդամներ՝	
Մարինա Սաֆարյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ/գլխավոր հաշվապահ
բացող անդամներ	
Գոհար Մեսրոպյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ
Սպարտակ Պետրոսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի իրավաբան
Հանձնաժողովի քարտուղար՝	
Լիանա Ղարագյոզյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Մկրտչյանը: Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-որոշման առաջին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների հակաօրնական գործողությունների, ներկայացված բողոքների մասին
3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման, հայտ ներկայացրած մասնակիցների մասին
4. Տվյալներ գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի գների և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

5. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և պահանջներին համապատասխանության մասին:

6. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման շուրջ նախատեսվող միաժամանակյա բանակցությունների մասին:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների հակաօրնական գործողությունների, ներկայացված բողոքների մասին

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

2.1 Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2.2.Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

2.3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրնական գործողություններ չեն հայտնաբերվել:

2.4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

2.5. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցները, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման, հայտ ներկայացրած մասնակիցների մասին

3.1. Ընթացակրգի հայտերը բացվել են 10.05.2022թ. 11:00-ին armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով:

3.2. Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե, հեռախոս, էլ.-փոստ	ՀՎՀՀ
1	«ՖԼԵԾ» ՍՊԸ	Հասցե՝, ք. Երևան, Ե.Կողբացու 30 հեռ.՝ +374 10 53 42 33 էլ.- փոստ՝ flashltdtender@gmail.com	01808789
2	«ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Պուշկինի 1 հեռ.՝ +374 10 56 52 81 էլ.- փոստ՝ cpsenergygroup@gmail.com	02847546
3	«Մաքս Օիլ» ՍՊԸ	Հասցե՝ ք. Երևան, Տպագրիչների 8 հեռ.՝ +374 10 52 67 51 էլ.- փոստ՝ maxoil.llc@mail.ru	02662703

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տվյալներ գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկայի գների և մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

4.1. Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց որ սույն Ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և հայտարարեց գնման հայտով սահմանված գնման առարկաների ձեռքբերման նախահաշվային գները:

4.2. Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

N	Մասնակցի անվանում	Նախահաշվային գին	Մասնակիցների առաջարկած գները	
			Արժեք /առանց ԱԱՀ/	Ընդհանուր գին /ներառյալ ԱԱՀ/
1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	10 000 000	7 802 000	9 362 400
2	«ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ		7 833 333.33	9 400 000
3	«ՖԼԵԾ» ՍՊԸ		8 381 666,67	10 058 000

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պահանջներին համապատասխանության մասին

5.1. Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց, որ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

5.2. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են սահմանված պահանջներին և գնահատվում են բավարար:

6. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում գների նվազեցման շուրջ նախատեսվող միաժամանակյա բանակցությունների մասին

6.1. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը

համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր բոլոր մասնկիցների ներկայացրած գնային առաջարները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, **օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի** հիման վրա, որոշեց նիստը կասեցնել և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամնակյա բանակցությունների մասին, որը տեղի կունենա **2022 թվականի մայիսի 13-ին ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 1-ին հարկ հասցեում**:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

7.1. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա **2022 թվականի մայիսի 13-ին ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 1-ին հարկ** հասցեում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝ _____ Ն.Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ.Սաֆարյան

_____ Գ.Մեսրոպյան

_____ Ս.Պետրոսյան

քարտուղար՝ _____ Լ. Ղարագյոզյան